իսկ բարեգործութիւնը եւ բարի գործողներին պաշտպանում։

Գալով մարդկային երջանկութեան միւս պայմանին՝ մարդու բնական իրաւունքների պաշտպանութեանը, պէտք է ասենք, որ Շահամիրեանի օրէնքը այս խնդրում եւս փրկարար դեր է խաղում։ Օրէնքի հովանաւորութեան տակ՝ մարդը կարող է ազատ մտածել, ազատ խօսել եւ ազատ գործել, պայմանով, որ այդ ազատութեամբ **ուրիշի ազատութեանը** չդպչի։ Եւ որ գլխաւորն է, օրէնքի շնորհիւ զօրեղ կերպով պաշտպանուած են մանաւանդ կրօնի եւ սեփականութեան ազատութիւնները, որոնք ԺԸ դարի մտածութեան մէջ կազմում էին մարդու ամենասրբազան իրաւունքները։ Եւ վերջապէս երջանկութեան երրորդ պայմանն այն է, որ անհատը պաշտպանուած լինի կառավարական պաշտօնեաների եւ ընդհանրապէս պետութեան դէմ։

Հեղինակի կարծիքով՝ օրէնքն է այն միակ միջոցը, որ այդ հնարաւորութիւնը տալիս է մարդուն, որովհետեւ օրէնքով է կառավարւում պետութիւնը, օրէնքով է գործում կառավարութիւնը — հանրապետութեան նախագահից մինչեւ յետին պաշտօնեան։ Ամէն ինչ նախատեսնուած ու սահմանուած է օրէնքով եւ ոչ ոք չի կարող մազի չափ անդամ շեղուել օրէնքից։ Գործադիր իշխանութիւնն իսկ, որ սովորաբար միշտ տրամադիր է իրեն ազատ զգալու օրէնքից, կոյր կամակատարն է օրէնքի — իր պետից կամ հանրապետութեան նախագահից սկսած. «Սա — հանրապետութեան նախագահը — իրաւունք չունի մէկն ու մէկի գլխից, իր կամքով, մի մազ քաշելու» (65)։ Հարկն ու հարկապահանջութիւնը, որ ամէնից կամայական պետական գործառնութիւնն է, իր յետին մանրամասնութիւններով, որոշուած ու սահմանուած է օրէնքով եւ ուրեմն այլեւս որեւէ ազատ տեղ չի մնար պաշտօնեաների կամայականութեան համար։

Սակայն, որպէսզի օրէնքը իրեն վիճակուած այդ յոյժ կարեւոր դերը կարողանայ կատարել, անհրաժեշտ է, որ նա, իբրեւ լրացումներ, իրեն կից ունենայ եւս երկու պայման — անպայման հնազանդութիւն եւ նուիրուած պաշտօնէութիւն։ «Մենք պիտի չինենք — ասում է հեղինակը — հայ ազգի համար մի տուն, որի հիմքը լինի օրէնքը, սիւները՝ պաշտօնէութիւնը, առաստաղը՝ հնազանդութիւնը» (40)։ Բայց ամենից աւելի եւ ամենից առաջ օրէնք։ Օրէնքը մի պետութեան համար նոյնն է, ինչ որ հիմքը տան համար։ Ուստի, «օրէնք մեր թագաւորեսցի ի վերայ ազգին հայոց եւ յերեսս աշխարհին Հայաստանեաց» (62)։

Ահաւասիկ ի՛նչպէս է ներկայացնում հեղինակը օրէնքի բարերար ազդեցութիւնը.— «Եթէ կամենում էք ազատ լինել եւ հաւասարապէս թագաւորել ձեր երկրում. եթէ կամենում էք ազատ տէրը լինել ձեր ունեցուածքի եւ ըստանալ պատիւ առաքինութեան համար. եթէ կամենում էք սրբել անօրէնութեան աղտը եւ մաքրել ձեր խիղճը — հարկաւոր է, որ դուք չինէք իմաստութեան տուն ձեզ համար, ընտրէք բարի օրէնքներ եւ հնազանդէք նրանց, որպէսզի ոչ ոք չիշխի ձեզ վրայ եւ անիրաւութեան ճանապարհը չգտնի։ Օրէնքով դուք ձեռք կը բերէք ոչ միայն ձեր անձի ու ձեր ունեցուածքի ապահովութիւնը, այլ եւ կ՝ունենաք ազատ ժամանակ՝ իմաստութիւն եւ հանճար ձեռք բերելու, որը երջանկութիւն կը տայ հայոց ազգին եւ կ՝առատացնի երկրի արդիւնաբերութիւնն ու պետութեան եկամուտները։ Օրէնքով դուք ամենքդ կը լինէք ազատ ձեր գործերում, կը վերանայ չար մարդկանց երկիւղը ձեր սրտից եւ ամէն ոք կարող է ազատապէս մտածել ու խօսել եւ հաւատացած լինել, որ ինչ ինքն ունի, ապահովաբար իրենն է եւ ոչ ոք չի կարող դիպչել նրան։ Այդպիսով դուք ազատ ժամանակ կ՝ունենաք նուիրուելու — մէկը՝ քահանայութեան, միւսը՝ քաջ զինուորութեան, երրորդը՝ հողագործութեան, չորրորդը՝ արհեստի, հինգերորդը՝ իմաստութեան։ Մեր աշխարհը կը լցուի մարդկանցով եւ մենք կը լինենք երջանիկ. կամաց-կամաց մեր մէջ էլ կը ծնուեն շնորհալի եւ ազատ մարդիկ, եւ օտարները, տեսնելով մեր ազատութիւնն ու օրէնքները, կը խցեն իրենց բերանները, կը դադարին ծաղրաբանել մեզ եւ այլեւս ճանապարհ չեն գտնի ոտնձգութիւններ անելու մեր դէմ» (21, 59, 106)։

Եւ որովհետեւ օրէնքը այսքան կենսական գործօն է հայ ժողովրդի փրկութեան ու երջանկութեան համար, ուստի հարկաւոր է —